



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2017-18 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նոր կարգի կիրառման մասին:
3. Հայոց լեզվի պատմության ամբիոնի հաշվետվությունը:
4. 2018թ. մայիսին ԵՊՀ-ում կայանալիք «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» խորագրով գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին»:
5. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 24 անդամներից նիստին մասնակցում է 19-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով (2017-18 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին) պրոֆ. Ա. Ավագյանը հաղորդման ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Մարգարյանին: Վերջինս մանրամասն ներկայացրեց դեկանատի կողմից ձեռնարկված նախապատրաստական աշխատանքների ընթացքը՝ մասնավորապես ասելով, որ պատրաստ են բոլոր ժամանակացույցները, ստորագրված ու կնքված են քննական տոմսերը, հատկացված են համապատասխան քննասենյակները, և առայժ որևէ տհաճ միջադեպ կամ խոչընդոտ արձանագրված չէ: 1-ին կիսամյակի քննաշրջանը կսկսվի ամառնորյա արձակուրդներից անմիջապես հետո՝ 2018-ի հունվարի 8-ին:

Օրակարգի **2-րդ հարցը**, որը վերաբերում էր շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նոր կարգի կիրառմանը, որոշ տարակույսներ առաջացրեց գիտխորհրդի անդամների մեջ: Պրոֆ. Ա. Ավագյանը մանրամասն ներկայացրեց հարցի էությունը՝ ընդգծելով, որ պետական բանավոր քննությունների վերացման պայմաններում պետք է խստացվեն ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանության պահանջները, ըստ էության համոզվել աշխատանքների կատարման ինքնուրույնության ու որակի մեջ, բացառել գրագորությունը և ուրիշ արատավոր երևույթներ:

Գիտխորհրդի նախագահ Ա. Ավագյանը, անցնելով **օրակարգի 3-րդ** հարցին, հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանին: Վերջինս մասնավորապես զեկուցեց հետևյալը.

- Այս ուսումնական տարին սկսեցինք տխուր. ամբիոնում կրճատվեց 3.25 դրույք, վաստակած հանգստի անցավ Գ. Հանանյանը, 0.25 դրույքի անցան Ռ. Շաբոյանը, Ա. Կարապետյանը, Ն. Մարկոսյանը, Վ. Մուրադյանը և Մ. Մանթուրջյանը:

Ամբիոնն ունի մեկ հեռակա ասպիրանտ և երեք հայցորդ:

Այս ուսումնական տարում ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է ՈւԳԸ զեկուցումներ, վարել նիստեր, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային: 2017թ. հոկտեմբերին Ա.Աբաջյանը ԵՊՀ-ում դասախոսություն է կարդացել թիվ 54 ավագ դպրոցի աշակերտների համար, Ն. Դիլբարյանը՝ թիվ 20 դպրոցում անցկացրել բաց դաս: 2016թ. նոյեմբերին ամբիոնը ֆակուլտետի ՈւԳԸ-ի հետ կազմակերպել է «Լավագույն գրաբարագետ» խորագրով օլիմպիադա, որին մասնակցել են 1-ին և 2-րդ կուրսի

ուսանողները. հաղթողներին շնորհվել են պատվոգրեր, գրքեր: Ուսանողության կողմից լայն արձագանք ստանալու պատճառով որոշվեց այն դարձնել ամենամյա, և այս նույնքերին նորից անցկացվեց օլիմպիադան, որի արդյունքներն ամփոփվեցին երկու օր առաջ: 2017թ. ապրիլին ևս աստվածաբանության ֆակուլտետում Ն. Պողոսյանը և Ռ. Շաբոյանը կազմակերպել են գրաբարի օլիմպիադա: Ն. Պողոսյանը ՀԱԵ Արարատյան թեմի հետ համատեղ կազմակերպել է հանրապետական օլիմպիադա՝ «Գրաբար» առարկայից:

Մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շարքում ամբիոնի դասախոսներ Ս. Գրիգորյանը՝ Սևանի Վազգենյան հոգևոր ճեմարանում, իսկ Ն. Պարոնյանը Գևորգյան հոգևոր ճեմարանում հանդես են եկել զեկուցումներով: Ս. Գրիգորյանը կազմակերպել է գիտաճանաչողական էքսկուրսիաներ բանասիրական ֆակուլտետի ուսանողների հետ՝ Գոշավանք, Հաղարծին, պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողների հետ՝ Լաստիվեր:

2017թ. հունիսին Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած Ջահուկյանական միջազգային գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել Ա. Աբաջյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Պարոնյանը:

Ն. Պողոսյանը պարբերական այցեր է կազմակերպել Մայր աթոռ Ս. Էջմիածին և հանդիպումներ Գևորգյան ճեմարանի սաների հետ, Երուսաղեմի պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի հրավերով ուղևորվել է Երուսաղեմ՝ «Գրիգոր Շրթայակիր Պատրիարք» գրքի շնորհանդեսին մասնակցելու և հայ ուսանողների հետ հանդիպում ունենալու նպատակով: Ն. Դիլբարյանը մասնակցել է միջազգային գիտաժողովների Սանկտ Պետերբուրգի համալսարանում և Արևելյան ձեռագրերի ինստիտուտում: Ն.Դիլբարյանը և Ն. Պողոսյանը մասնակցել են Երևանում կայացած լեզվաբանական միջազգային 11-րդ գիտաժողովին:

Հայոց լեզվի պատմության ամբիոնը 2017 հունիսի 15-ին ՀՀ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կազմակերպել է «Երիտասարդ գիտնականների դպրոց» հանրապետական գիտաժողով՝ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով, որի նպատակն էր հանրապետության երիտասարդ գիտնականներին աջակցելը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հարցում:

Սույն թվականի հոկտեմբերի 15-ին ամբիոնը հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ կազմակերպել էր արդեն ավանդական դարձած «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական գիտաժողովը, որին մասնակցեցին հանրապետության տարբեր բուհերի, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ: Հուրախություն մեզ՝ «Աբեղյանական ընթերցումներ» հոդվածների ժողովածուն ընդգրկվել է ԲՈՀ-ի կողմից ընդունված հրատարակությունների ցանկում:

Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները գիտահետազոտական ակտիվ գործունեություն են ծավալել 2016-2017 ուստարում՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 42 հոդված, 9 գիրք, որից 4-ը հեղինակակցությամբ:

2017թ. ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել Ա. Աբաջյանի, Ն. Դիլբարյանի և Ա. Յուզբաշյանի հեղինակած՝ «Հայոց լեզվի պատմություն»-ը՝ ԿԳՆ-ի կողմից երաշխավորված որպես բուհական դասագիրք: Նշենք, որ ամբիոնը մինչ օրս չի ունեցել իր կազմած դասագիրքը:

ՀՀ գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ հրատարակվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի կազմակերպած՝ Մանվել Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածուն: Ն. Պողոսյանը հրատարակել է «Գրիգոր Շղթայակիր Պատրիարք» և «Դրվագներ հայ բառարանագրության պատմության» գրքերը, Ն. Պողոսյանի և Ա. Կարապետյանի համահեղինակությամբ լույս է տեսել «Գրաբարի շտեմարան»-ը հանրակրթական դպրոցների համար: Ամբիոնի դասախոս Մ. Սանթրոջյանը համահեղինակ է ԵՊՀ ուսումնամեթոդական 4 հրատարակությունների:

Շնորհակալություն:

Գիտխորհուրդը հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան աշխատանքը միաձայն գնահատեց դրական:

Գիտխորհրդի օրակարգի **4-րդ հարցի** առիթով (2018թ. մայիսին ԵՊՀ-ում կայանալիք «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» խորագրով գիտաժողովի նախապատրաստական աշխատանքներ) պրոֆ. Ա. Ավագյանը հանձ-

նարարեց բոլոր ամբիոնների վարիչներին ըստ արժանվույնս նախապատրասվել գիտաժողովին, որովհետև մնացել է կարճ ժամանակահատված:

Ընթացիկ հարցերում՝

ԼՍԵՑԻՆ.- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և Վ. Սաֆարյանը:

Նշվեց, որ Զապել Եսայանն իր հիմնական գործերը գրել է մինչև հայ գրականության նորագույն շրջանը: Նրա կյանքի ու ստեղծագործության մասին վերջին խոսքը՝ մենագրության տեսքով, ունի տասնամյակների պատմություն, ուստի արդիական է առաջադրվող թեման:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Զապել Եսայանի պատումի արվեստը»** Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին:**

ԼՍԵՑԻՆ.- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի 2017-2018 ուստարվա հայցորդ **Գրետա Արսենի Գասպարյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը լայն ու խորը առնչություններ ունի ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի գրական-մշակութային դաշտերի հետ: Հեռավոր Արևելքից՝ սկսած Ճապոնիայից մինչև Վիկինգներ, Իսահակյանը տարբեր ժողովուրդների կրոնական, փիլիսոփայական, գեղարվեստական, բանահյուսական նյութերն առատորեն օգտագործել է իր ստեղծագործություններում՝ ձգտելով բացահայտել հայկականը

համամարդկայինի մեջ և հակառակը: Թեև իսահակյանագիտությունը չի անտեսել այս իրողությունը, սակայն զուտ այս տեսանկյունից լիարժեք քննության չի արժանացել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. **Գրետա Արսենի Գասպարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Արևելքի և Արևմուտքի գրական զուգահեռներում»՝ Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Պարզևի Մուրադյանին**:

ԼՍԵՑԻՆ.- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի 2017-2018 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Աննա Վարդանի Ստեփանյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ միջնադարարի աստիճանակարգային (հիերարխիկ) հասարակական հարաբերությունները պայմանավորում են կանոնի գերակայությունը տարբեր ոլորտներում: Հայ միջնադարյան տաղերգությունն աչքի է ընկնում բովանդակային տարաշերտ հարստությամբ՝ խոհախրատական մոտիվ, սոցիալական ու քաղաքական խնդիրներ, սիրո և բնության երգ, երգիծական ու կենցաղային շերտեր: Անկախ թեմատիկ այս բաժանումներից՝ միշտ զգալի է կրոնականոնական աշխարհայեցողության կնիքը, ինչը նկատելի է այլ ժողովուրդների միջնադարյան գրականության մեջ ևս: Այս հարաբերություններում գեղարվեստի ինքնատիպությունը որոշվում է հեղինակային հայեցակարգով, ոճամտածողական յուրահատկությամբ: Ատենախոսության թեման գիտական և արդիական հնչեղություն է ձեռք բերում այդ գաղափարագեղագիտական խնդիրների բացահայտումներով, դրանց զուգահեռ քննությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. **Աննա Վարդանի Ստեփանյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ

միջնադարյան քնարերգության մեջ՝ Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վազգեն Հմայակի Սաֆարյանին:**

ԼՍԵՑԻՆ.- Բ. գ. դ., պրոֆ. **Վազգեն Սաֆարյանի՝ «Գրականության պատմության դրվագներ»** հոդվածների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ պրոֆ. Վ. Սաֆարյանի՝ գրականության պատմության դրվագներ» հոդվածների ժողովածուն ներառում է մոտ 45 տարիների ընթացքում տպագրված հոդվածներ, գրախոսություններ, զեկույցներ, ուսումնասիրություններ, որոնք հիմնավոր պատկերացում են տալիս մշակութային դարաշրջանների, պատմության և գեղարվեստի հարաբերության, գաղափարականի և հոգեբանականի, մարդու և մարդկայինի տարբեր ընկալումների, ընդհանրապես ազգաբանական ու մշակութաբանական խնդիրների մասին: Քննության նյութ են դարձել ազգային գոյաբանության և դրա կրողների հարցերը Խորենացու Պատմության մեջ, ներքին մարդու և արտաքին աշխարհի խոհաքնարական ընկալումները Նարեկացու Մատյանում, Սայաթ-Նովայի խաղերի և միջնադարյան մշակույթի առնչությունները, Աբովյանից մինչև Հրանտ Մաթևոսյան տարբեր հեղինակների ստեղծագործություններում արծարծված ինչ-ինչ խնդիրներ (Մունդուկյան, Մուրացան, Թումանյան, Չարենցը և այլք): Հարցադրումների և կատարումների շրջանակը դրվագաբար յուրովի ամբողջացնում է գրականության պատմության դիմապատկերը, և դա կարող է հետաքրքրել ոչ միայն մասնագետին, այլև ընթերցող լայն հասարակությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Վ. Սաֆարյանի՝ «Գրականության պատմության դրվագներ» հոդվածների ժողովածուն երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- Բ. գ. դ., պրոֆ. **Ալբերտ Մակարյանի՝ «Կրկին Պարոնյանի հետ. նոր ընթերցումներ»** մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ալ. Մակարյանի մենագրությունը նվիրված է Հակոբ Պարոնյանի կյանքի և ստեղծագործության հանգուցային մի շարք խնդիրների ուսումնասիրությանը: Հեղինակը նորահայտ բազմաթիվ փաստերի համակողմանի քննությամբ բացահայտում է հանճարեղ երգիծաբանի գլուխգործոց երկերի տեքստերի պատմությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, գրական աղերսներն ու գեղարվեստական հատկանիշները, նաև գեղագիտական արժեքաբանությունը:

Ալ. Մակարյանի աշխատության առանձնահատկությունն այն է, որ բնավ չհավակնելով դառնալու Հակոբ Պարոնյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ամբողջական ուսումնասիրություն՝ այն միտված է երգիծաբանի կյանքի, գրական ժառանգության և ստեղծագործության բազմաթիվ երևույթների, այսպես կոչված, *անծանոթությունների* բացահայտմանը: Մասնավորապես տպավորիչ են Պարոնյանի նշանավոր «Պտույտի...»՝ Փարիզի Նուպարյան մատենադարանում պահվող երկու տասնյակից ավելի նորահայտ տարբերակների հայտնագործությունները, դրանց ուսումնասիրությունն ու առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելը: Այդ համապատկերում գրականագետին հաջողվել է ապացուցել արևմտահայ մամուլի գրական-գեղարվեստական նյութերի էջերի տակ տևականորեն ստորագրվող վիճահարույց մի շարք դերանուն-ծածկանունների (*Ես, Դուն, Նա, Անիկա...*) Պարոնյանին պատկանելը և այլն: Դա իր հերթին մատուցել է մեկ ուրիշ հաճելի անակնկալ, այն է՝ «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպի՝ անվերապահորեն Պարոնյանի գրչին պատկանելը:

Գրականագետը համադրական վերլուծությամբ վերհանել է նաև Պարոնյանի գլուխգործոց երկերի ստեղծագործական պատմությունը, գեղարվեստական նյութի աստիճանական մշակման որակական թռիչքների ներքին դինամիկան, իրականի ու գեղարվեստականի հարաբերակցության քննությամբ բացահայտել կերպարների վավերական հիմքերը և բազմաթիվ հարակից այլ խնդիրներ:

Ալ. Մակարյանի՝ 265-էջանոց մենագրության գիտական խմբագիրն է Բ. Գ. Պ., պրոֆ. Ս. Մուրադյանը, իսկ գրախոսները՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Վ. Սաֆարյանը և Բ. Գ. Թ., դոց. Ռ. Էլոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով հետազոտության գիտաճանաչողական արժեքը՝ Բ. Գ. Պ., ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ. Ալ-

բերտ Մակարյանի՝ «Կրկին Պարոնյանի հետ. նոր ընթերցումներ» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- Բ. գ. թ., դոցենտ **Հայկ Աշոտի Համբարձումյանի՝ «Մասնա ծներ. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ»** մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ Հ. Համբարձումյանի անդրադարձը էպոսին թելադրված է ինչպես էպոսի մոտիվային ուղեցույցի ստեղծումը նախապատրաստելու, այնպես էլ գիտական ասպարեզում ավանդական մեթոդների կիրառության նկատելի տեղապտույտի հանգամանքով ու վերլուծական նոր գործիքների ներգրավման անհրաժեշտությամբ:

Անհրաժեշտություն կա նորովի տեսական ու գործնական ավելի մեծ նյութի ընդգրկմամբ ու վերլուծությամբ ներկայացնել էպոսի բանավոր ավանդման, տարբերակայնության, գրական ավանդույթի հետ բազմազան փոխազդեցությունների խնդիրները: Նամանավանդ եթե հաշվի առնենք, որ շուրջ չորս տասնամյակ էպոսի պատումների ամբողջական համեմատական քննություն ընդգրկող ուսումնասիրություն չի հրատարակվել: Եվ Հայկ Համբարձումյանի գիրքը որոշակիորեն լուծում է այս խնդիրը: Անդրադարձը էպոսին թելադրված է ինչպես էպոսի մոտիվային ուղեցույցի ստեղծումը նախապատրաստելու, այնպես էլ գիտական ասպարեզում ավանդական մեթոդների կիրառության նկատելի տեղապտույտի հանգամանքով ու վերլուծական նոր գործիքների ներգրավման անհրաժեշտությամբ: Անհրաժեշտություն կա նորովի տեսական ու գործնական ավելի մեծ նյութի ընդգրկմամբ ու վերլուծությամբ ներկայացնել էպոսի բանավոր ավանդման, տարբերակայնության, գրական ավանդույթի հետ բազմազան փոխազդեցությունների խնդիրները: Նամանավանդ եթե հաշվի առնենք, որ շուրջ չորս տասնամյակ էպոսի պատումների ամբողջական համեմատական քննություն ընդգրկող ուսումնասիրություն չի հրատարակվել: Եվ Հ. Համբարձումյանի գիրքը որոշակիորեն լուծում է այս խնդիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հ. Համբարձումյանի՝ «Մասնա ծներ». պատում, մոտիվ, գրքային ավանդույթ» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհավորեց մոտեցող Սուրբ Ծնունդը և բոլոր ներկաների Ամանորը՝ մաղթելով քաջատողջություններ և գիտամանկավարժական գործունեության նոր հաջողություններ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ